

առեւտրականները այնքան յուսահատեցուց, որ անոնք հրապարակը լքեցին Հայերուն, որոնք վաճառականութեան մէջ աւելի յանդուգն էին, ինչպէս նաեւ իրենց ինչքը պաշտպանելու ստեն աւելի լճոտկան:

«Բայց որքան որ ալ մեծ ըլլայ այս (Հայ) ժողովուրդին Պարսիկներէն վայելած քաջալերութիւնը, մենք ալ Ռուսիայէն նուազ (աջակցութիւն) չստացանք, այդ երկրին մեղմէ ըստացած ծառայութեան փոխարէն, եւ մեր անոր հետ ունեցած բնական կապակցութեան պատճառաւ: Յար Պետրոս խորհեցաւ, որ Անգլիացիներէն աւելի իրաւունք ոչ որ ունէր, իր երկրին մէջէն Պարսկաստանի հետ վաճառականութիւն ընելու, եւ կը յուսար այնքան գրաւել ընել զայն, որ մեր ուշադրութիւնը այդ կողմը գրաւէր: Այս ծրագիրը հետապնդելու իր փափաքը այնքան մեծ էր, որ վերջապէս 1718-ին հրովարտակ մը հրատարակեց՝ բոլոր օտարականներուն, թոյլատրելով իր հպատակներուն, որ նման հում մետաքս ներմուծեն իր պետութիւնը, ինչպէս նաեւ Ռուսիոյ արեւելեան կողմը գտնուող երկիրներէն: Երբեք չկրցայ գիտնալ, թէ ասիկա որեւէ արդիւնք տուա՞ւ, որովհետեւ օտարականները վտանգաւոր նկատեցին միջոցները, եթէ ոչ անգործնական, եւ Հայերէ ու ուսներէ զատ, ոչ որ հաստատուած էր Պարսկաստանի հիւսիսային մասերուն մէջ այս առեւտուրը յառաջ տանելու նպատակաւ»:<sup>1)</sup>

Հանուէյի այս կարեւոր վկայութիւնը ցոյց կուտայ, որ Հայերը գրեթէ միահեծան տէրերն էին հում մետաքսի առեւտուրին, թէեւ 1711-ին Լեզկիներու կողմէ Ծամախիի կործանումէն վերջ, Հայերն ալ մեծ կորուստներու ենթարկուեցան:

Ուղեգիր William Cox կը վկայէ, որ, ըստ իր տեղեկութեանց, Ռուսերուն հետ Հայերն ալ նեղակապատէն անգին անցած չեն, — կէտ մը, որուն մէջ ան կը սխալի: Նոյն ստեն ինքն ալ կը չեղաէ, թէ անոնց գլխաւոր առեւտրական կեդրոնը Ծամախին էր, եւ «1711-ին, այդ քաղաքը Լեզկիներէն գրաւուեցաւ եւ անոնց

(այսինքն՝ Հայոց եւ Ռուսաց) գործատեղիները կործանեցան եւ կողոպտուեցան»:<sup>1)</sup>

Իրաւ է, թէ 1718-ին Մեծն Պետրոս հրովարտակով մը կը թոյլատրէր օտարականներուն մետաքսի առեւտուրով դբաղիլ: Ատով ան յոյս ունէր Անգլիացիները քաջալերել եւ յառաջ քաշել: Սակայն, Անգլիացիք եւ կամ ուրիշ օտարականներ չյանդուգնեցան հրապարակ իջնալ, նկատի առնելով Կովկասի եւ Պարսկաստանի քաղաքական անհանդարտ եւ խիստ վտանգաւոր կացութիւնը, եւ մանաւանդ որ իրենք չէին հաստատուած մետաքս արտադրող Պարսկական գաւառներուն մէջ, որպէս Գիւլան, Մազանտերան, Շիրվան: Իրենց երկրին անծանօթ ըլլալը ուրիշ արգելք մըն էր, մինչ Հայ եւ փոքր մասամբ ալ Ռուս առեւտրականները (որոնց մէջ գուցէ մեծ թիւ մը պէտք է Ռուսահայ հասկնալ) կը շարունակէին այդ վտանգաւոր դրութեան մէջ գործել եւ բաւական յաջողութիւն գտնել:

1739-ին յանկարծ Կասպեան հրապարակին վրայ երեւցաւ John Elton անուամբ յանդուգն, խառնակիչ, արկածախնդիր Անգլիացի մը, որ բաւական վախ պատճառեց Հայ հում մետաքսի վաճառականներուն: Սակայն, ան իր նպատակին մէջ անյաջող մնաց եւ իր ու միւս Անգլիացոց հրապարակէն հեռանալուն պատճառ գարձաւ:

1735-ին Ռուս հրամանատար Վասիլիէ Նիգլիչիչ Տատիչեւի առաջնորդութեամբ Ռուսական արշաւախումբ մը զրկուեցաւ Օրէնպուրի՝ Թաթարաց ասպատակութեանց դէմ պատուար մը կանգնելու նպատակաւ: Այդ արշաւանքին կը մասնակցէր նաեւ Ռուսական արքունիքէն յանձնարարուած Անգլիացի ձան էլիթընը, որ իր փորձառութիւններէն օգտուելով՝ 1738-ին Ռուսիոյ Անգլիական ընկերութեան ծրագիրը մը ներկայացուց այդ վաճառականական ընկերութեան կասպեան առեւտուրը արժատական փոփոխութեան ենթարկելու համար:

Էլիթըն հետեւ էր Հայոց հանդէպ նպաս-

1) Անդ՝ էջ 7-8:

1) Travels, 1784, Լոնտոն, հատոր Բ., էջ 255: